ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

“ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ” ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԿ No. 7854-ԱՄ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՓԱԹԵԹԻ ՀԱՄԱՐԸ (ՀԱՄԱՁԱՅՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ)՝ PSMP2 - C-5.5.2

Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ/IBRD) կողմից ՝ Պետական հատվածի արդիականացման երկրորդ ծրագրի (ՊՀԱԾ II) իրականացման նպատակով և մտադիր է այդ գումարի մի մասը ծախսել սույն հայտարարությունում նկարագրված խորհրդատվական և այլ ծառայությունների գնման համար:

Խորհրդատվական ծառայությունների հիմնական նպատակն է ահազանգել լրացուցիչ ջանքեր պահանջող բարեփոխումների վերաբերյալ և նախապատրաստել Հայաստան-Պետական հատվածի արդիականացման 2-րդ վարկային ծրագրի աշխատանքների կատարման անկախ գնահատականը՝ հիմք ընդունելով մշակված կատարման մոնիթորինգի ցուցանիշները:

Սույն առաջադրանքի իրականացման համար նախատեսվում է վարձել անհատ խորհրդատու (հետայսու՝ Խորհրդատու):

Ուստի ՀՀ կառավարության աշխատակազմը եւ ՀՀ ֆինանսների նախարարության “Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն” ՊՀ-ն հրավիրում են պահանջներին համապատասխանող բոլոր անհատ խորհրդատուներին ներկայացնել ծառայությունների մատուցման առնչությամբ հետաքրքրվածության իրենց հայտերը:

Հետաքրքրված խորհրդատուները պետք է ներկայացնեն ինքնակենսագրական թերթիկ, ինչպես նաեւ այլ տեղեկատվություն՝ մատնանշելով, որ վերջիններս համապատասխան որակավորում ունեն վերոնշյալ ծառայությունների մատուցման համար:

Հանձնարարականն իրականացնելու համար անհատ խորհրդատուին կտրամադրվի մինչև 11 ամիս:

Որակավորում եւ պահանջներ

Խորհրդատուն պետք է ունենա՝

- Բարձրագույն կրթություն,
- Պետական կառավարման մարմինների հետ աշխատելու առնվազն 5 տարվա փորձ,

- Դոնոր կազմակերպությունների հետ աշխատելու առնվազն 5 տարվա փորձ,
- Ծրագրերի կառավարման, ներառյալ ծրագրերի մոնիտորինգի և գնահատման առնվազն 5 տարվա փորձ,
- Հաշվետվությունների մշակման հմտություններ,
- Հայերեն և անգլերեն լեզուների գերազանց իմացություն:

Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել Համաշխարհային Բանկի «Ուղեցույցի՝ ՎՋՄԲ փոխառությունների եւ ՄՋԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» պարբերություն 1.9-ին (Խորհրդատուների ուղեցույց), որտեղ շարադրված է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն 2004թ. մայիսին հրատարակված եւ վերանայված 2006թ. հոկտեմբերին եւ 2010թ. մայիսին ՀԲ Ուղեցույցների՝ ՀԲ վարկառուների կողմից խորհրդատուների ընտրություն եւ վարձում, շրջանակներում սահմանված Բաժին V-ում ներկայացված Անհատ խորհրդատուների ընտրության մեթոդի ընթացակարգերի համաձայն:

Հետաքրքրված անհատ խորհրդատուները հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կարող են դիմել ստորեւ ներկայացված հասցեով տեղական ժամանակով 09:00-ից 18:00 ընկած ժամանակահատվածում:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն ստորև ներկայացված հասցեով (անձամբ, կամ փոստով, կամ էլ-փոստով) **մինչեւ 2016 թ. փետրվարի 9-ը, ժամը 18:00**:

ՀՀ ֆինանսների նախարարության
“Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն” ՊՀ
Գործադիր տնօրեն
պրն. Էդգար Ավետյանին
Հասցե՝ Տիգրան Մեծ 4, 3-րդ հարկ, Երեւան, ՀՀ
Հեռ՝ (374-11) 91 05 81
Էլ-փոստ՝ info@ffpmc.am